

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
1921 Թ. ՄՈՍԿՎԱՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ**

Նայասարանի Նանրապետության խորհրդայնացումից հետո նոր իշխանությունների առջև ծառացավ քեմալական Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման խնդիրը: Բանն այն է, որ իրավական փոփոխություններ չունեցող ՂՏ հաշտարար պայմանագրերը (նախագահ՝ Ալեքսանդր Խալիպյան) 1920թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը Ալեքսանդրապոլում անիրավահավասար, նվաստացուցիչ պայմանագիր էր ստորագրել Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) կառավարության պայմանագրերի (նախագահ՝ Քյազիմ Դարաբեքիր փաշա) հետ: Պայմանագիրը Նայասարանի Նանրապետությունից Նայասարանի Սոցիալիստական Խորհրդային Նանրապետության (ՂՄՆՏ) ժառանգած ոչ բարեկամաստ իրողություններից էր: Ըստ այդմ՝ Նայասարանը ոչ միայն էական փորձքային կորուստներ էր կրում (Թուրքիային էին անցնում Կարսի մարզը և Սուրմալուի գավառը, իսկ Նախիջևանի, Շարուրի և Շահխախթի շրջանները գրավելու էին թուրքական հովանավորության փակ՝ մինչև այս փորձքներում հանրաքվե անցկացնելը), հրաժարվում էր 1920թ. օգոստոսի 10-ին ստորագրված Մերի պայմանագրից, այլև, ինչը շատ էական է, պետության ինքնուրույնությունը զգալիորեն սահմանափակվում էր, և այն կախման մեջ էր ընկնում Թուրքիայից¹:

ՂՄՆՏ իշխանությունների առաջին ձեռնարկումներում կարևոր փուլ ուներ Ալեքսանդրապոլի պայմանագրի հետևանքների հաղթահարումը: Նայասարանի հեղկումը քայլեր ձեռնարկեց քեմալականների հետ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ: Սակայն վերջիններն անգիջում կերպով պնդում էին հայ-թուրքական հարաբերություններն Ալեքսանդրապոլի պայմանագրի սկզբունքներով կառուցելու վրա: Նման իրավիճակում Խորհրդային Նայասարանի իշխանություններին մնում էր հույսերը կապել Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Նանրապետության (ՌՍՖՄՆ) և ԹԱՄԺ կառավարության միջև կայանալիք կոնֆերանսին ՂՄՆՏ-ի մասնակցությամբ թուրքերի հետ առկա վեճերին (այդ թվում՝ փորձքային-սահմանային) լուծում փնտրել:

Մեր խնդիրը չէ մանրամասն ներկայացնել 1921 թ. փետրվար-մարտին Մոսկվայում փուլի ունեցած ռուս-թուրքական կոնֆերանսի նախապայքարաստիժն ու ընթացքը: Պայմանագրության մեջ այս հիմնահարցը բավականին մանրամասն լուսաբանված է²: Կանդիդատուհանք միայն կոնֆերանսին պայքարաստիժն ուղղված Խորհրդային Նայասարանի պայմանագրերի և մասնավորապես ՂՄՆՏ արտաքին գործերի ժողովրդական կոմիտեի արտաքին գործունեությանը՝ գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք նոր վավերագրեր:

1920 թ. դեկտեմբերի 9-ին հավանություն փախել ռուս-թուրքական կոնֆերանս

1 Տե՛ս «Նայասարանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», խմբագրությամբ՝ Զ. Մ. Կիրակոսյանի, Երևան, 1972, էջ 683-687, փաստ. թ. 340:

2 Տե՛ս Գ. Մ. Նալբանդյան, Խորհրդային Նայասարանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, էջ 5-25:

գումարելու թուրքական կառավարության առաջարկին՝ Խորհրդային Ռուսաստանի արպաթին գերապետությունը, առանց թուրքերի հետ վերջնականորեն համաձայնեցնելու, կոնֆերանսին մասնակցելու հրավեր ուղարկեց Խորհրդային Նայաստանին և Խորհրդային Ադրբեջանին³։ Վրաստանին հրավիրելու մասին խոսք չէր կարող լինել, քանի որ այն դեռևս չէր խորհրդայնացվել։

ՄԽՍՀ իշխանությունները ձեռնամուխ եղան կոնֆերանսին պարբերաբար աշխատանքներին։ Նայաստանի հեղկոմի 1920թ. դեկտեմբերի 26-ի նիստում քննարկվեց կոնֆերանսի հարցը։ Որոշվեց Արաբա Վարիկյանին նշանակել խաղաղարար կոնֆերանսում ՄԽՍՀ պարվիրականության անդամ։ Պարվիրական ամբողջական կազմի որոշումը թողնվեց ապագային⁴։ Երեք օր անց՝ դեկտեմբերի 29-ին, ՌՍՖՍՀ արագործժողկոմ Գեորգի Չիչերինին ուղղված հեռագրում ՄԽՍՀ արագործժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանը հարցնում էր Թուրքիայի հետ կայանալիք կոնֆերանսի տեղը և ժամանակը⁵։ Ի պարասխան դրան՝ դեկտեմբերի 31-ին 11-րդ կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Շավա Էլիավային ուղղված գրությամբ Գ. Չիչերինը խնդրում էր փոխանցել ՄԽՍՀ արագործժողկոմին, որ թուրքերը ճանապարհվել են Մոսկվա, ուստի ՌՍՖՍՀ մայրաքաղաք են հրավիրվում Խորհրդային Նայաստանի և Խորհրդային Ադրբեջանի պարվիրակները՝ նշելով. «թող հայկական կառավարությունն անմիջապես այստեղ ուղարկի իր պարվիրակությունը»⁶։

1921թ. հունվարին ՄԽՍՀ իշխանությունները համակողմանիորեն նախապարբերաբար էին Մոսկվայում Խորհրդային Ռուսաստանի, Խորհրդային Ադրբեջանի և քննական Թուրքիայի հետ կայանալիք կոնֆերանսին։ Ընթացիկ է նկատվել, որ «Երևանում ամբողջ հունվար ամսվա ընթացքում առաջիկա կոնֆերանսը շարունակում էր համարվել քառակողմ»⁷։ Մոսկովյան իշխանությունների և Խորհրդային Նայաստանի ղեկավարների միջև կապող օղակ էր Մոսկվայում ՄԽՍՀ լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանը։ Վերջինս անհրաժեշտ տեղեկություններ էր հայտնում Երևան։ Հունվարի 15-ին ՆԿ(Բ)Կ կենտրոնին ուղղված նամակում նա փոխանցում էր իր տպավորությունը, թե Իոսիֆ Ստալինը և ՌՍՖՍՀ մյուս ղեկավարները փոխել են քննական շարժման մասին իրենց վերաբերմունքը։ Անցում կարարելով տարածքային հարցերին՝ նամակագիրը նշում էր, որ իր հետ գրույցի ընթացքում Ի. Ստալինը կարող էր հայտարարել է, որ Նախիջևանն անպայման մնալու է Խորհրդային Նայաստանի կազմի մեջ։ Այնուհետև տեղեկացվում էր, որ որոշված է Կարսը նույնպես թողնել ՄԽՍՀ-ին։ Չնայած դրան՝ Ս. Տեր-Գաբրիելյանն առաջարկում էր ամբողջ մարզի և նրա չորս շրջանների (Կարս, Կադզվան, Օլթի, Արդահան) ազգագրական վիճակի վերաբերյալ նյութեր ուղարկել։ Նամակի վերջում նշվում էր, որ Մոսկվայում գումարվող կոնֆերանսին մասնակցելու պարագային արդեն

3 Տե՛ս «Նայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում», էջ 463-464, փաստ. թ. 262։

4 Տե՛ս Նայաստանի ազգային արխիվ (ՆԱԱ), ֆ. 114, ց. 2, գ. 17, թ. 19, ֆ. 117, ց. 1, գ. 11, թ. 13։

5 Տե՛ս ՆԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 18, թ. 21։

6 «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий», сост., отв. ред., автор предисл. и коммент. Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, л. 338, док. N 1025.

7 Վ. Ն. Ազախեցյան, Նայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006, էջ 88։

անհրաժեշտ է պարզաբանություն ուղարկել ՌՍԳԽՄ մայրաքաղաք⁸։ Իսկ հունվարի 16-ին Հայկեղկոմի նախագահ Սարգիս Կասյանին ուղղված հեռագրում, համաձայն Ի. Սպարիին պահանջի, Ս. Տեր-Գաբրիելյանն առաջարկում էր շտապ նյութեր ուղարկել Կարսի ազգաբնակչության վիճակի և Ալեքսանդրապոլի խնդրի վերաբերյալ⁹։

Նախապարաստավելով կայանալիք կոնֆերանսին՝ Հայաստանի հեղկոմը ձեռնամուխ եղավ պարզաբանության կազմի որոշմանը և Մոսկվա փանելու համար համապարաստիան զեկուցագրեր, փողեկանքներ, վերլուծություններ, քարտեզներ, գծագրեր պարաստելու գործին։

1921 թ. հունվարի առաջին կեսին կազմվեց Մոսկվա մեկնող հայկական պարզաբանությունը՝ արագորոշող կոմ Ալեքսանդր Բեկզադյանի ղեկավարությամբ։ Պարզաբանության քարտուղարը Վահագն Մուրադյանն էր, որպես ֆինանսական խորհրդական ընդգրկված էր Սերովբե Չալխուշյանը, նաև՝ աշխարակիցներ Գաբրիել Տեր-Օհանյանը, Պարոտ Բեկզադյանը, Արամ Տեր-Մկրտչյանը և ուրիշներ (սպասարկող անձնակազմ)¹⁰։ Պարզաբանության անդամ էր նաև Ս. Տեր-Գաբրիելյանը, որը Երևանից մեկնող պարզաբաններին պետք է միանար Մոսկվայում։ Հայկեղկոմի նախագահ Սարգիս Կասյանի ստորագրությամբ հունվարի 8-ին Ս. Տեր-Գաբրիելյանին փրկված մանդատում նշվում էր, որ նա լիազորվում է ՀՍԽՄ պարզաբանության մյուս անդամների հետ Հայկեղկոմի անունից ստորագրել Ռուսաստանի, Ադրբեջանի, Հայաստանի և Թուրքիայի միջև կնքվելիք պայմանագիրը¹¹։

Կոնֆերանսին ներկայացնելու համար ՀՍԽՄ պարզաբանության պարաստած փողեկապու զեկույցում անդրադարձ էր կատարվում մինչև 1920 թ. թուրք-հայկական պարերազմը գոյություն ունեցող իրավիճակին, մանրամասն նկարագրվում էին ՀՍՍՍՀ սահմանները։ Խորհրդային Հայաստանի փոփոխական զարգացման և մշակութային առաջընթացի փաստերից անհրաժեշտ էր համարվում անմիջապես չեղյալ հայտարարել Ալեքսանդրապոլի պայմանագիրը և 1920թ. նոյեմբերի 13-ին Վրաստանի հետ Թիֆլիսում ստորագրված համաձայնագիրը։ Առաջարկվում էր շտապափույթ Խորհրդային Հայաստանին վերադարձնել թուրքերի կողմից զինագրավված Կարսի մարզը, Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջևանի գավառները։ Ջեկույցում նկարագրվում էին նաև հայ-թուրքական սահմանի փաթերակներ, կցված հավելվածներում ներկայացվում էին ռազմաստորաբաժանական վերլուծություններ ու բնակչության դիագրամներ։ Երևում է, որ սահմանների փաթերակների պարաստման ժամանակ հայկական պարզաբանությունը ելնում էր 1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի երրորդ հոդվածում սահմանված դրույթներից, որով նախատեսվում էր ՀՍԽՄ սահմաններում ընդգրկել մինչև 1920թ. թուրք-հայկական պարերազմը ՀՍ կազմում գրավող փաթածքները¹²։ Բացի այդ, զեկույցին կցված են եղել նաև համապարաստիան քարտեզներ։

8 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1444, ց. 1, գ. 7, թ. 3-4։

9 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 319, թ. 1։

10 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 85, թ. 31, ց. 2, գ. 18, թ. 31։

11 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1444, ց. 1, գ. 1, թ. 36։

12 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 1-24, ֆ. 1022, ց. 5, գ. 25, թ. 1-20։ Նաև՝ Ա. Մ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 186-189։

Նայասարանի ազգային արխիվում կատարած պրպարումների արդյունքում մեզ հաջողվեց պարզել, որ, բացի տեղեկատու գեկույցից, ՆՍԽՆ պարվիրակությունն իր հետ Մոսկվա է տարել նաև արագործող կոմսարի տեղեկատու բաժնի վարիչ Մովսես Պերրոսյանի և բաժնի վարիչի տեղակալ Գեղամ Անտրևյանի հեղինակած երեք գեկուցագրեր, ինչպես նաև մի շարք այլ փաստաթղթեր:

Մեր կողմից շրջանառվող առաջին փաստաթուղթը պարաստվել է 1920թ. դեկտեմբերի 13-ին: «Արտասահմանյան գաղութներ» խորագրով նշված վավերագրի հեղինակը Մ. Պերրոսյանն է: Բանն այն է, որ հանրապետության խորհրդայնացմանը հաջորդող շրջանում ՆՍԽՆ իշխանությունները կարևորում էին հայկական գաղթավայրերի հանգամանքը, ինչի վկայությունն է նաև այս գեկուցագիրը: Փաստաթղթում մանրամասն անդրադարձ էր կատարվում հայկական գաղթավայրերի դրությանը, Նայկական հարցի առնչությամբ գաղթավայրերում տիրող միայնությանը և գաղթափառ կազմակերպություններին: Նեղիակը կարևոր խնդիր էր համարում արտասահմանի հայությանը ներկայացնել խորհրդայնացման օգտակարությունը Նայասարանի հետագա զարգացման տեսակետից: Նա ՆՍԽՆ ղեկավարությանն առաջարկում էր գաղթավայրերն օգտագործել քաղաքական և ֆինանսարկեսական առումներով օգուտներ ստանալու համար¹³:

1921թ. Մոսկվայում քննարկված Թուրքիայի հետ կայանալիք կոնֆերանսին մեկնող հայկական պարվիրակությունն իր հետ վերցրեց նաև այս գեկուցագիրը: Փաստաթղթի արխիվային օրինակներից մեկի վրա ՆՍԽՆ պարվիրակության քարտուղար Վահագն Մուրադյանը 1921թ. հունվարի 27-ին (Թիֆլիսից դեպի Բաքու ճանապարհով) մակագրել է. «ռուսերեն թարգմանել»¹⁴:

Նայկական պարվիրակությունը Մոսկվա տարավ նաև 1920թ. դեկտեմբերի 23-ին Մ. Պերրոսյանի պարաստած «Խորհրդային Նայասարանի Արևելքի քաղաքականության մասին» գեկուցագիրը: Այսպես խոսվում էր Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականության մեջ ՆՍԽՆ-ի ունենալիք դերի մասին: Զեկուցագրի համաձայն՝ Խորհրդային Նայասարանը պետք է «հեղափոխական սերմեր» տարածեր «Արևելքի տառապող աշխարավոր ժողովուրդների մեջ»: Այս նպատակի համար առաջարկվում էր ՆՍԽՆ արագործող կոմսարի կազմում հիմնել արևելքի բաժին, որը պետք է համագործակցեր Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Ադրբեջանի արագործող կոմսարների համապարաստան բաժինների հետ: Ի դեպ, գեկուցագիրը Մոսկվա տանելու օրերին արդեն արագործող կոմսարի կազմում հիմնվել էր արևելյան բաժին՝ նույն Մ. Պերրոսյանի ղեկավարությամբ: Զեկուցագրում այնուհետև քննության էր առնվում Թուրքիայի քաղաքական, տնտեսական, միջոցառարկային դրությունը, թուրքական քաղաքական հոսանքների փոխարարությունները՝ սկսած Արդուլ Նամիդի իշխանության օրերից: Առանձին քննարկվում էր սահմանադրության տարիներին Թուրքիայի տնտեսական դրությունը, «բանվորական շարժումը», քննարկվում շարժումը: Փաստելով, որ առավել նպաստավոր պայմանների առկայության դեպքում Մուստաֆա Զեմալը կարող էր անցնել Արևմուտքի կողմը, Մ. Պերրոսյանը եզրակացնում էր. «Միակ ապահով միջոցը

13 Տե՛ս ՆԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 14, թ. 1-3 շրջ.:

14 Տե՛ս ՆԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 16, թ. 34 և շրջ., 1, 2 և շրջ.:

Թուրքիայի փառապաղ աշխարավոր գյուղացիությանն իրապես սոցիալական (այսինքն՝ սոցիալիստական – Ն. Ս.) հեղափոխության կողմը գրավելու համար Թուրքիայի սովետիզացիան է՝ բոլորովին անջատ եւ անկախ «Զեմալէն»։ Թուրքիան խորհրդայնացնելու համար առաջարկվում էր օգտագործել Ադրբեջանի եւ Ռուսաստանի թուրք (ադրբեջանցի) միավորական-քարոզիչներին։ Վերջիններս պետք է Թուրքիայում հիմնենին փարբեր գաղտնի կազմակերպություններ, որոնց ղեկավարությունը պետք է իրականացվեր Նայասպանից¹⁵։ Զեկուցագրի ռուսերեն թարգմանությունը 1921 թ. փետրվարի 18-ին վավերացված է ՆՍԽՍ պարվիրականության քարտուղար Վ. Մուրադյանի կողմից¹⁶։

Գ. Անդրեկայանի 1921 թ. հունվարի 5-ին պարտաստած գեկուցագիրը եւս առնչվում էր Թուրքիային։ Այն ունի «Կոմունիստական հողը Թուրքիայի եւ թուրքահայերի մեջ» խորագիրը։ Սա Մ. Պետրոսյանի 1920 թ. դեկտեմբերի 23-ի գեկուցագրի փրամաքանական շարունակությունն է։ Այսպես հեղինակը կարևորում էր կոմունիստական գաղափարների փարածումը Թուրքիայի ասիական փարածքներում։ Գ. Անդրեկայանի կարծիքով՝ քեմալական շարժումը ժողովրդական լայն համակրանքի չի արժանացել, ուստի անհրաժեշտ է ժողովրդին ծանոթացնել կոմունիզմի սկզբունքներին։ Այս փեսակերից, իբրեւ Թուրքիայի ներքին կացությանը ծանոթ փարբ, առանձնակի ուշադրության էր հարկացվում ցեղասպանությունից հետո Արեւմտյան Նայասպանում եւ Փոքր Ասիայում մնացած արեւմտահայության բեկորներին։ Սակայն արեւմտահայության շրջանում սակավաթիվ էին կոմունիստական գաղափարներ կողմնորդ, ինչը ստիպված էր ընդունել նաեւ Գ. Անդրեկայանը։ Ուստի՝ անհրաժեշտ էր համարում այս առումով սիստեմատիկ աշխատանք կատարել։ Ինչ վերաբերում է Անդրանիկի հսկողության ներքո գրնվող փարածքներին, ապա նա կարծիք էր հայտնում, թե այդպեղ ավելի դժվար կլինի խորհրդային վարչակարգի օգտին քարոզչություն իրականացնել։ Զեկուցագրի վերջում հեղինակը նշում է. «ամբողջ թրքահայության եւ մասնավորապես Կ. Պոլսի, Իզմիրի եւ արտասահմանյան հայության համար ... այնպեղ իրականացվող յուրաքանչյուր պրոպագանդայի գործ պետք է ներկայացնել առավելապես ազգային գոյնով»¹⁷։ Փաստաթղթի ռուսերեն թարգմանությունը ՆՍԽՍ պարվիրականության քարտուղար Վ. Մուրադյանի կողմից Բելգորոդում (Մոսկվայի ճանապարհին) վավերացված է 1921 թ. փետրվարի 16-ին¹⁸։

Բացի սրանցից, ինչպես երևում է մի շարք վավերագրերի վրա ՆՍԽՍ պարվիրականության քարտուղար Վ. Մուրադյանի կատարած մակագրություններից ու նշումներից, պարվիրականությունն իր հետ Մոսկվա է փարել նաեւ մի շարք փաստաթղթեր Թուրքիայի ներքին վիճակի, ռազմական ուժերի մասին, քեմալականների 1919 թ. Էրզրումի կոնգրեսի որոշումները, թուրք կոմունիստներ Աբիդ Ալիմովի եւ Սուլեյման Նուրիի՝ 1920 թ. դեկտեմբերի 20-ին Բաքվում ներկայացրած հայրնի գեկուցումը եւ նմանատիպ այլ նյութեր¹⁹։

15 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 16, թ. 3-6։ Նաեւ՝ Կ. Ն. Խաչատրյան, Նայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007, էջ 112-113։

16 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 13, թ. 10-12 շրջ., ֆ. 114, ց. 1, գ. 11, թ. 59-61 շրջ.։

17 ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 16, թ. 55-58 շրջ.։

18 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 13, թ. 7-9։

19 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 11, թ. 62-63, 66-67, գ. 16, թ. 8-18, 20-21, 24-33, 37-49։

Ամենայն հավանականությամբ, հայկական գաղթավայրերին և Թուրքիայի իրավիճակին առնչվող զեկուցագրերը Մոսկվա փանելու պարճառ է հանդիսացել 1921 թ. հունվարի 15-ին ՆԿ(ք)Կ կենտրոնին ուղղված Ս. Տեր-Գաբրիելյանի նամակում րեղ գրած դրույթը, թե «Խորհրդային Նայաստանը և Արեւելքի շարժման մեջ նրա դերը, չնայած ոչ այնքան բավարար, սակայն, այնուամենայնիվ, այսօրեղ ընդունվում է»²⁰: Նշալ զեկուցագրերը ՌՍՖՍՀ մայրաքաղաք փանելով՝ ՆՍՄՆ պարվիրակությունը հավանաբար հույսեր էր փայփայում Թուրքիայի հեղ խորհրդային կողմի հարաբերություններում Նայաստանի դերի բարձրացման վերաբերյալ: Սակայն Մոսկվա ժամանելու հաջորդ օրերին հայ պարվիրակները համոզվեցին իրենց հույսերի անհեռանկար լինելու մեջ:

Նայկական պարվիրակությունը Մոսկվա ճանապարհվելիս իր հեղ վերցրեց ոչ միայն փարբեր փաստաթղթեր, այլև «Մոսկվայի բանվորներին» համար փարբալ սուճուխ և ալանի: Նունվարի 13-ին Աշարակի հեղկոմի նախագահ Գ. Գրիգորյանին ուղղված հեռագրում արագորճոդկոմարի հաշվապահ Տաճար Խաչվանքյանը ժողկոմի անունից խնդրում էր գնել լավ փեսակի կես փութ սուճուխ և կես փութ ալանի և մինչև հաջորդ երեկո փոխադրել կոմիսարիաղ: Նշվում էր, որ ընդեղենի «փոխարժեքը կփոխադրվի Նեղկոմիղ հաշվին սղացվելուն պես»²¹: Արդեն հունվարի 18-ին Աշարակի հեղկոմին ուղղված շնորհակալական հեռագրում արաբքին գորճերի ժողկոմ Ա. Բեկգաղյանը րեղեկացնում էր ողարկված ընդեղենը սղանալու մասին և նշում. «Նաճելի պարաբ եմ համարում կաղարել Ձեր ցանկությունը՝ հանճնել այղ նվերը Մոսկվայի բանվորին Կարմիր Աշարակի կողմից»²²: Բնչպես երևում է, Աշարակի հեղկոմը պահանջված ընդեղենն իր հաշվին է ողարկել արագորճոդկոմարին:

Իր հեղ վերցնելով կոնֆերանսին ներկայացնելու նպարակով պարրասղված նյութերը՝ Ա. Բեկգաղյանի գլխավորած պարվիրակությունը, Երևանում ՌՍՖՍՀ լիագոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի ողեկցությամբ, 1921 թ. հունվարի 18-ի լույս 19-ի գիշերը ճանապարհվեց Թիֆլիս: ՆՍՄՆ արագորճոդկոմը մղաղիր էր մենշելիկյան Վրաստանի դեկավարների հեղ ըննարկել Լոռու Չեգոք գղրու առնչությամբ նախարեալող հայ-վրացական բանակցությունների և առաջիկա կոնֆերանսի հարցը, ինչպես նաև ճանթանալ Վրաստանում ՆՍՄՆ լիագոր ներկայացուցչության գորճերին²³: Նախարեսած երկու օրվա փոխարեն Ա. Բեկգաղյանն ալելի երկղ ժամանակ մնաց Թիֆլիսում, սակայն նրա վարած բանակցությունները դրական արղյունք չունեցան: Նայ-վրացական կոնֆերանսն այղպես էլ չգումարվեց:

Արդեն հունվարի 29-ին ԹԱՄԺ կառավարության՝ Յուսուֆ Քեմալի գլխավորած պարվիրակության հեղ միննույն գնացքով ՆՍՄՆ պարվիրակությունը Թիֆլիսից ժամանեց Բաքու, իսկ փերվարի 6-ին աղրբեջանական (այն գլխավորում էր Բեհբութ Շահթախթինսկին) և թուրքական պարվիրակությունների հեղ ճանապարհվեց Մոսկվա²⁴: Վլաղիկավկագում ՆՍՄՆ փոխիղուպարոս նշանակված Նակոր Սաղիկյանը, որ հայկական

20 ՆԱԱ, ֆ. 1444, ց. 1, գ. 7, թ. 3:

21 ՆԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 18, թ. 35:

22 ՆԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 18, թ. 39:

23 Տեն ՆԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 18, թ. 51, գ. 61, թ. 15:

24 Տեն «Կոմունիստ» (Բաքու), 30 հունվարի, 1 փերվարի 1921 թ., թ. 21, 23: ՆԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 85, թ. 16:

պարվիրակության հետ Բաքվից վերադառնում էր Վլադիկավկազ, իր հուշերում վկայում է, թե «Նայկական ներկայացուցությունը գնում էր թուրքական պարզամավորության հետ միևնույն վագոնում՝ առանց իրար փոխելու, իրար երեսի նայելու»²⁵:

1921թ. փետրվարի 18-ին Մոսկվա հասնելուց հետո ՆՍԽՍՊ պարվիրակությունը ՌՍՖՖՍՀ արագորժողկոմար ներկայացրեց Խորհրդային Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդին, Գեորգի Չիչերինին, Վլադիմիր Լենինին, Իոսիֆ Ստալինին, Նիկոլայ Կրեստինսկուն ուղղված պարվիրակության փոփոխություն գրությունը: Թուրքերի պահանջով խորհրդային կողմի նախարեսած քառակողմ ձևաչափից երկկողմի վերածված կոմիսարների ժամանակ հայկական պարվիրակության ներկայացրած փաստաթղթերը չքննարկվեցին: Ինչ վերաբերում է մեր կողմից շրջանառության մեջ դրվող գրություններին, ապա մեզ հայրնի չէ դրանց ճակատագիրը: Եթե նույնիսկ դրանք փոխանցվել են հասցեատերերին, ապա էական նշանակություն չի փոխել փաստաթղթերին:

Ժամանակի հայ դեկավար կոմունիստ գործիչների հայացքների, Նայաստանի խորհրդայնացումից հետո Խորհրդային Նայաստանի ակնկալիքների, Մոսկվայում գումարվող կոմիսարների ունենալիք սպասումների փոփոխության կարևոր ենթ համարում ներկայացնել Ալեքսանդր Բեկզադյանի դեկավարած պարվիրակության Մոսկվա փառած գրություններից մեկը: Այն ամբողջովին կրում է այդ օրերի խորհրդային իրականության կնիքը՝ հարկապես համաշխարհային հեղափոխության սին գաղափարներին անմնացորդ հավաքաբար առումով: Վավերագիրը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ: Այն ներկայացվում է բնագրային փոքրով, ուր առկա են նաև որոշ անհարթ մտքեր ու ձևակերպումներ:

Զեկուցագրի հեղինակ Գեղամ Անյուրեյանը ժամանակի հայրնի կուսակցական գործիչներից էր: 1920 թ. Բաքվի հայալեզու «Կոմունիստ» թերթի խմբագրակազմի անդամ էր, 1921 թ. հունվարին նշանակվեց Խորհրդային Նայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի փոփոխություն բաժնի վարիչի օգնական, իսկ 1921 թ. մայիսին՝ բաժնի վարիչ: 1922 թ. հուլիսին արագորժողկոմարի լուծարումից հետո Գ. Անյուրեյանը նշանակվեց Ժողովրդական կոմիսարների խորհրդի քաղաքական բաժնի վարիչ:

ՆԱՄՈՍ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
պարմական գիր. թեկնածու

25 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Նախոր Ստալինյանի ֆ., գ. 4, թ. 131 եւ շրջ.:

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Կոմունիստական Հողը Թուրքիոյ եւ Թրքահայերու մէջ

5 յունւարի 1921թ.

Երեւան

Մեր սահմաններուն մէջ ճշգրիտ եւ փաստացի ըլլալու համար Թուրքիան պէտք է բաժնենք ազդեցութեան երեք մեծ շրջաններու, որոնք գոյութիւն ունին այժմ իր մէջ: Ասոնք որքան որ դասակարգային կարգուսարքին մէջ, իրենց մեծ ընդհանուր գիծերով կը ներկայացնեն նոյնանման եւ հաւասար իրերակարգ մը, բայց պրօպագանդայի աշխատութեան մէջ պէտք ունին իրարմէ բոլորովին տարբեր գործունէութիւններու:

Այս շրջանակները մենք պիտի կոչենք այսպէս՝ ա. Անատոլու, բ. Կիլիկիայ, գ. Կ. Պօլիս եւ Իզմիր:

Ես մասնաւորաբար պիտի ծանրանամ ասոնցմէ առաջինին վրայ, ինձ աւելի ծանօթ եւ այսօրուան օրս գործելու առաւել յարմար գետին մը ունեցած ըլլալուն համար:

Թուրքիան իբրեւ դասակարգային խոշոր տարբերութիւններ ներկայացնող երկիր՝ կը գտնուի տակաւին իր նախնական շրջանին մէջ: Կարլ Մարքսի կոմունիստական շարժման հիմ նկատող երկու հասունութիւնները՝ աստիճանական աղքատացման եւ կապիտալի կենտրոնացման թէօրիաները հոն գոյութիւն չունեն:

Բայց պատերազմով առաջացած տնտեսական յեղաշրջումը հոն եւս ծնուց արագ հասունացումը մանր բուրժուազիայի ամենէն անտանելի տիրապետութեան, որ թէպէտ խուլ, սկանական, բայց տարերային պայքար մը առաջացուց գործազուրկ գիւղացի եւ պատերազմէն առաջացած նոր հարուստ դասակարգերուն միջեւ:

Այն պատկերը, որ այսօր կը ներկայացնէ Անատոլուն եւ մասնաւորաբար անոր իսլամ եւ Թուրք տարրն պատկերացումն է ժողովրդի մէջ, որ սնանկութեան եւ քայքայման եզրը հասած է: Ամբողջ տասը տարւան պատերազմներու մէջ, բիւրաւոր Թուրք քամբախ երիտասարդներուն կորուստը եւ պատերազմին յաջորդող ներկայ տնտեսական ահաւոր յեղաշրջումը, գիւղացի եւ գործազուրկ դասակարգին մէջ մասնաւորապէս առաջացուցած է կատարեալ բարոյալքում, յուսահատութիւն եւ ամենամեծ ատելութիւն մը դէպի ամեն կերպ պատերազմի գաղափարին: Եւ մի գարմանաք, երբ ընդգծելով ըսեմ, որ այսօր միլլի իշխանութիւնը չի վայելեր ոչ մէկ ժողովրդական համակրանք, անգամ անոնց գիտակցումովը, թէ իրենց սեփական գոյութեան եւ անկախութեան համար կըլլայ այդ պայքարը:

Այսօր լաւագոյն ապացոյցը պիտի ըլլար մէջ բերել Անգորայի ընդհանուր զինակոչի պարագան, որ ոչ մէկ դրական արդիւնք տուաւ, եւ թելադրած ճիշտ այս իրականութիւնէն ան (Անգորան) ստիպւեցաւ հաստատել ամսականաւոր զինուորագրութեան սխիւթեմը, որուն վազելով պատասխանեցին բոլոր գործազուրկ, աղքատ եւ անհող գիւղացիական դասակարգը, մղւած տնտեսականի ահաւոր հոգսով: Հետեւաբար, մենք ոչ միայն բացատրած պիտի ըլլայինք առհասարակ

Թուրք ամբողջ ազգաբնակչութեան եւ մասնաւորաբար անոր գիւղացի, ընչազուրկ դասակարգին ամբողջական մտայնութիւնը հանդէպ Անտանտային զինեալ քաղաքականութեան, այլ նաեւ այն խուլ եւ սկսնական պայքարն ալ, որ հոն գոյութիւն ունի բուրժուազիի, բիւրօկրատիզմի եւ միլիտարիզմի դէմ, որոնցմէ մին կը ծծէ իր վաստակը վաշխառուական եւ տնտեսական ամեն կերպ ճնշումներով, նետելով անոր վզին տնտեսական ազատութեան անուրը, իսկ միւսը՝ կը սպառնայ իր ամենէն կենսական պահանջին երկարատեւ խաղաղութիւն:

Ահաւասիկ ասոր համար է, որ հապէս ազգայնական միլլի շարժումը, անոնց ղեկավարները, համակիրները, հայրենասէր թուրքերի անւամբ կը կազմեն միլիտարիզմ-բիւրոկրատիզմը եւ մանր բուրժուազիան, իրենց բէգերու եւ սպաներու, փաշաներու խումբերովը, որով Անգորայի Մեծ Ազգային ժողովը, ոչ միայն չէր կրնայ գոհացնել գիւղացի գործազուրկ դասակարգին պահանջները, այլ ընդառաջ կերթայ անոնց պահանջներուն՝ այլապէս հակառակ բուրժուազիական շահերու պաշտպանութեան օրինաւորութեան իրագործումովը: Ահաւասիկ ճիշտ այս իրականութիւնէն է, որ աննախնթացօրէն ծնունդ առին այն կարգ ապստամբական փորձերը միլլի տիրապետութեան դէմ, ստեղծելով Թուրքիոյ մէջ առաջին անգամ ըլլալով գիւղացի ընչազուրկ դասակարգային ընդդիմութիւնը միլիտարիզմի եւ հարուստ դասակարգերու դէմ:

Թէպէտ թոյլ եւ անյաջող, բայց ինքնին արտայայտիչ այս քանի մը ապստամբական փորձերը (սեպտեմբերին Եօզկատի եւ Զիլէի մէջ, հոկտեմբերին Քէօփրուկ եւ Տավշան-Տաչըի, նոյեմբերին՝ Գոնիայի մէջ) կը ներկայացնեն թուրք ճնշած դասակարգին մէջ պատմական մեծ նշանակութիւն մը ըլլալով առաջին զարթօնքի օրերը իրենց համար:

Այս ներքին քաղաքական ուղղութիւնը՝ շաղկապ նեղ նացիօնալիստա-բուրժուազիական շահերով, առաջ բերին խիստ սահմանափակ եւ միշտ ոգեւորման ու քաջալերութեան կարօտ քանի մը տասնեակ ազատ հոգիներու, որոնք ըմբռնած դասակարգային կռիւ նշանակութիւնը անցան խումբերու եւ խմբակներու գլուխ զէնքով մարտնչելու եւ ուրիշ քանիներ ալ, մամուլի եւ խօսքի միջոցաւ, որոնք շնորհիւ այժմ հոն տիրող դէպի բոլշեւիզմի քաղաքական հակումին, կրցին օգտուել եւ օգտագործել այս անցողակի եւ գերազանցապէս յարմար ընկերները:

Պարզ է, որ Անգորայի Մեծ ազգային ժողովը պիտի հակառակէր որեւիցէ հիմնական քայլի եւ պրօպագանդայի, որ կանցնէր իր դէպի ռուս պոլշեւիզմի պղտոնական համակրանքի սահմանները, անգամ ան (Անգորան) պիտի հակառակէր իր ժողովրդին իրական համակրանքին, դէպի կոմունիստական շարժումը, որուն իրական տեսլանքը միշտ ալ անծանօթ մնացին եւ կը մնան ժողովրդէն, բացի կարմիր բանակներու պատերազմական ձեռնարկներէն եւ աջողութիւններէն...

Սակայն եւ այնպէս ճիշտ այս դէպի ռուս բոլշեւիզմի քաղաքական հակումը, կուգայ նաեւ այսօրեայ գերազանցապէս յարմար եւ հազիւ ներկայացող առիթը, ուր միլլի իշխանութեան հսկողութիւնէն բոլորովին անկախ ու ազատ այսպէս ըսած կէս պաշտօնապէս, կարելի պիտի ըլլար աշխատիլ ժողովրդին տալով իրական, ճշգրիտ

ծանօթութիւններ կոմունիստական շարժման, ռուս խորհրդային իշխանութեան ներքին կեանքին, եւ այլնի մասին, որոնք պիտի օգնէին թուրք մասսային իրենց շահերու գիտակցութեան մէջ, խմբելով եւ քաջալերելով այն սակաւաթիւ անհատներ, որոնք այդ ուղղութիւնով տոգորուն տրամադիր են եւ տենչացող այս ճամբով գործելու... Մեծ պիտի ըլլար այս աշխատանքի դերը ոչ միայն իր տեղային սահմանափակ շրջաններու, այլեւ համաշխարհային յեղաշրջման համար եւ, առաւել եւս, Խորհրդային Հայաստանի, որովհետեւ երբ այն օրը, եւ այդ օրը վստահաբար պիտի գայ, ուր միլի դեկալարները թողնելով իրենց շինծու համերաշխութիւնը, ի խնդիր Իզմիրի, Կ. Պօլսոյ, Թրակիոյ կամ Հին ու նոր գրաւումներու, այն ատեն կըսեմ Անատօլիի մէջ պիտի կանգնի նոր վսեմ գաղափարական շարժում մը, որ դէմ յանդիման պիտի գայ նացիօնալ-բուրժուազիական իշխանութեան անարգ քաղաքականութեան դէմ, կանգնեցնելով գիւղացի ընչազուրկ դասակարգին դրօշակը, որ տեսակ մը հիմ, ծառացման կէտ պիտի ըլլայ այն նոր նաճումներուն, որոնք պիտի ըլլան եւ պէտք է որ ըլլան Անատօլուի եւ անոր վրայով Պալքաններու եւ Եգիպտոսի մէջ, ուր բուրժուազիայի ահագին շահերու խորտակումով պիտի օգնէ մեր այն ուրիշ ճիւղերուն, որոնք կըլլան եւ պիտի շարունակեն ըլլալ այլ կողմեր կանգնեցնելով ճնշածներու նոր, եղբայրական իրաւակարգը:

Այն ահագին նշանակութիւնը, որ ունի առաւելապէս Խորհրդային Հայաստանը եւ կոմունիստական շարժումը Անատօլուի մէջ, ինձ խորհուրդ կուտայ ջերմօրէն յանձնարարելու Ձեզ աւելի քան ուժգին եւ աւելի քան ուշադիր ձեռք առնելու միջոցներ, որոնք առնազն պիտի ապահովեն մօտիկ ապագային մէջ հակայեղափոխական եւ անգամ Անտանտային ճակատի մը փչացման դեռեւս չի կազմած իսկ վաղւան գալոց օրերու մէջ դէպի նոր աշխարհներու առաջնադարձան լաւագոյն կուան մը...

Խօսելէ վերջ կոմունիստական պրօպագանդայի համար այժմ հոն տիրող նպաստաւոր կամ աննպաստ պայմաններու մասին, կրկին պիտի անդրադառնամ հոն կատարելիք գործունէութեան ձեւին վրայ: Ինչպէս որ առիթ ունեցայ յիշելու այն երկդիմութիւնը, որ այսօր կը ներկայացնեն միլիոնները Անտանտին եւ Ռուսաստանի Խորհրդային Հանրապետութեան հետեւ այն ժողովրդային խորունկ հակակրանքը, որ արդէն թուրք մասսային կողմէ քանիցս արտայայտուեցաւ տեղութիւն կուի կամ պատերազմի ամեն կերպ գաղափարի դէմ, կը ներկայացնէ նպաստաւոր հող եւ առիթ մը դէպի կոմունիստական շարժումը:

Իբրեւ կազմակերպած ոյժ, ան (կոմունիզմը) պիտի բաշխի միայն իթիհատ Թէրաքքը կուսակցութեան իբրեւ բուրժուա-նացիօնալիստական կազմակերպութիւն, մինչ անդին ռուս բոլշեւիզմի ուղղակի եւ անուղղակի ազդեցութեան եւ օգնութեան տակ ան (կոմունիզմը) պիտի կրնայ ի մի խմբել ցիրուցան եւ ոգեւորման կարօտ անհատ անձերը, կազմակերպելով եւ ձեւաւորելով զանոնք՝ իբրեւ ընդդիմադիր ոյժ եւ կորիզ գալոց օրերու յեղափոխական նաճումներուն:

Այս գործին համար առաւելապէս պէտք է գործածելն այնպիսի անհատներ, որոնք ոչ միայն թուրք լեզւին, սովորոյթին, հոգեբանութեան, այլ առաւելապէս

գիտական ըլլան Հոն տիրող այսօրւան իրաւակարգերուն պաշտօնական մարմիններէ միսիւններ, ոչ մէկ դրական արդիւնք կրան ունենալ, որոնք մօտէն կամ հեռուէն հսկողութեան պիտի ենթարկուէին միլի իշխանութիւնէն:

Մասնաւորելով խօսքս թրքահայ հատածին մասին, աւելացնենք, որ անոնք կը ներկայացնեն Անատոլիոյ մէջ հաւաքականութիւն մը այն չափով, ինչ չափով որ որ եւէ հպատակ ազգ կրնայ ներկայացնել բռնապետական ոչութիւն մը մէջ: Հոն ապրող թրքահայ հատածը, որ մեր կարծիքով ցեղին ամենեւնեւ կենսունակ տարրը կը կազմէ, կապրի սմբած իւլուրդային կեանքի մը, հազիւ զգալով իրենց գոյութեան ապահովութիւնը: Իրաւ է, որ միլի իշխանութիւնը իր ոչ իսլամ հպատակներու հանդէպ նպաստաւոր կամ աննպաստ քաղաքականութիւն մը չունի, որ աւելի կախած է աշխարհագրական դիրքէն եւ տեղային հանգամանք ներկայացնող այլեւայլ խնդիրներէն, ինչպէս եղած Մարաշի, Կէյվէյի, Եօզկաթի եւ Բիւթանիոյ ջարդերը մինչ ուրիշ տեղեր հայութիւնը կանցնէր համեմատաբար հանդարտ կեանքի մը:

Սակայն եւ այնպէս, մենք կը հաւատանք, որ անոնց մէջ կայ տարր մը, որ շուտով ընդունակ է իւրացնելու կոմունիստական գաղափարը: Մենք կը հաւատանք նաեւ, որ կոմունիզմը Հոն պիտի գտնէ ընդունակ ծառայողներ, անգամ անձնագոհումի գինով տոգորուեն...

Սակայն այն ամենքը պէտք է կազմակերպել, ի մի խմբել, հրահանգել եւ հրահրել: Իսկ առաւել եւս, արթնացնել մասսայական համակրանք, ընդհանրապէս կոմունիստական շարժման հանդէպ դժար թէ ըլլար. այդպիսի աշխատանքի կարելիութիւն մենք կրնանք գտնել Ազգ[ային] գոյնին տակ, հետաքրքրելով զանոնք դէպի նոր՝ Խորհրդային Հայաստանը. այն չափով, որ չափով որ կրցած էր ստեղծել Հին՝ անցեալ Հայաստանը:

Պէտք է խոստովանել, որ թրքահայ հատածին մէջ կոմունիզմի գաղափարը սակաւաթիւ անհատ մտածողներէն անդին չանցնէր, որովհետեւ այս մասին ոչ միայն ոչ մէկ կերպ աշխատանք թափւած է, այլ հակառակ հոսանքներու (Անտանտա) ուղղակի կամ անուղղակի ազդեցութեան տակ մնացած է. ոչ միայն ան ծանօթութիւն չունի ռուս[ական]. մեծ յեղափոխութեան պատմութեան մասին, այլ կատարեալ անտարբերութիւն՝ չըսելու համար հակակրանքի վերաբերում մը ունի:

Այս ամենքին մէջ մենք կը տեսնենք եւ կոմունիստական շարժման համար կանոնաւոր, սխտեմատիկ աշխատութեան մը պէտքը: Մենք ըրալէն յարմարագոյն կը նկատենք, որովհետեւ ինչպէս լսեցաւ, ոչ միայն թուրքերուն, այլ հայերուն մէջ, անգամ Անտանտի ուղղակի ազդեցութեան տակ գտնուող տեղերու՝ Պօլսոյ, Կիլիկիոյ կամ Իզմիրի մէջ, առաջ եկած է հակակրանք մը չըսելու համար անգօր եւ անկազմակերպ թշնամութիւն մը Անտանտի դէմ:

Ասիկա եւս կը հաշւիմ ազգերու հաւաքական այն հոգեբանական տրամադրութիւններէն մին, ուր իսկացի եւ սխտեմատիկ գործունէութիւնով մը դիւրաւ կրնայ տեղ բռնել հակահոսանք մը: Միլի երկիրներու մէջ ապրող հայերը կուսակցական այլ կազմակերպութիւններ չունին:

Քանի մը խօսք եւս Կիլիկիոյ, Պօլսոյ, Իզմիրի կամ Անտանտի ուղղակի ազդեցութեան տակ գտնուող թրքահայ հատածներու մասին:

Պարզ է, որ Անտանտի հսկողութեան տակ գտնուող երկրամասերու մէջ աւելի դժուար պիտի ըլլար պրօպագանդայի գործը Խորհրդային Հայաստանի համար, քանի որ այդ տեղերուն մէջ Անտանտը իրական ոյժ կը ներկայացնէ եւ արդէն իսկ կազմակերպած այլ կուսակցութիւններ գոյութիւն ունին: Բայձեւ այնպէս ազգին ներկայ ըրպէի հաւաքական հոգեբանութիւնը կ'ներկայացնէ յուսահատ եւ բոլորովին բացասական դիրք մը Անտանտի եւ այլ կուսակցութիւններու հանդէպ, որոնց քաղաքական սնանկութիւնները ամենքին պարզեցաւ: Ես կը կարծեմ թէ կարելի պիտի ըլլար մասնաւորաբար Կիլիկիոյ մէջ, Անատօլի երկիրներուն հետ շահագործել այս հոգեկան դրութիւնը, ուր կը գտնուէր աւելի քան կէս միլիօն հայութիւն: Նոյն բանը մենք կաւեղացնենք յունական գրաւման տակ գտնուող հայերու համար:

Տրւած ըլլալով, որ հայութեան արեւմտահայ հատածը ապրում է ռուսահայ հատածէն այլապէս տարբեր միջավայրերուն մէջ՝ հեռու ամեն հասարակային հոսանքներէ, հեռու ամէն կոմունիստական շփումներէ, հոն ամբողջապէս եւ առաջին ըրպէին իսկ ձախողութեան պիտի ենթարկուէին այն բոլոր աշխատութիւնները, որոնք կ'ըլլան այս ուղղութիւնով: Մեր աշխատութիւնը անհատ մտածողներէ անդին չպիտի անցնի:

Հոն առաւել եւս պէտք է զգոյշաւոր ըլլալ այն բանէն, քանի որ մեր գործը չպիտի ըլլայ ինչպէս Կիլիկիոյ կամ Անատօլի մէջ գաղթական եւ հայրենի օճախի ցանկացող դասակարգի մը հետ, այլ մանր բուրժուազիայի հոգով սնած մեծամասնութեան մը հետ:

Ամփոփելով մեր ըսածները առհասարակ ամբողջ թրքահայութեան եւ մասնաւորապէս Կ. Պօլսոյ, Իզմիրի եւ արտասահմանեան հայութեան համար, կ'ըսենք եւ կը կրկնենք, որ հոն ըլլալիք ամեն պրօպագանդայի գործ, պէտք է ներկայացնել առաւելապէս ազգային գոյնով, ի հեճուկս ինկող Հայաստանի եւ ի նպաստ ներկայ Խորհրդային Հայաստանի: Այս ուղղութիւնով տողորուն գործ, համակրութիւն արթնացնել դէպի Խորհրդային Հայաստանը կ'ընայ յաջողել Կիլիկիոյ եւ Անատօլիոյ հայութեան մէջ:

Վերջացնելով այս ամփոփ տեղեկագիրը՝ պատրաստ եմ աւելի ընդարձակ եւ մանրամասն բերանացի ծանօթութիւնները տալ այս սխտեմատիկ աշխատութեան գործեւակերպին մասին, որ պէտք է սկսել հոն:

[Գեղամ] Անտելեպեան

Ծանօթութիւն. պարճէն, սրած է Թիֆլիսի Կոմունիստ կոմիտէին:

Մակագրութիւն. "14/II/1921. "Об основах пропаганды коммунистических идей в Турции и среди турецких армян". Перевести на русский язык. В. Мурадян".

ՆԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 16, թ. 55-58 շրջ.: Պարճէն: Մերենագիր:

Փաստաթղթի ռուսերէն թարգմանությամբ վավերացված պարճէնը տն՝ ՆԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 13, թ. 7-9: